ՈՐՈՇՈՒՄ

16 օգոստոսի 2011 թվականի **թիվ** 770 քաղ. Մոսկվա

«Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների ու կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշեց.

1. Ընդունել «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 006/2011) (կցվում է):

2. Հաստատել՝

2.1. Այն ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 006/2011) պահանջների պահպանումը (կցվում է).

2.2. Այն ստանդարտների ցանկը, որոնք պարունակում են «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 006/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ (կցվում է):

3. Սահմանել՝

3.1. «Հրատեխնիկական արտադրատեսակների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2012 թվականի փետրվարի 15-ից.

3.2. Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ կամ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերը, որոնք տրամադրվել կամ ընդունվել են Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտ հանդիսացող արտադրանքի (այսուհետ՝ արտադրանք) առնչությամբ, վավերական են մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը, բայց 2013 թվականի օգոստոսի15-ից ոչ ուշ՝ բացառությամբ մինչեւ սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրը տրամադրված կամ ընդունված այն փաստաթղթերի, որոնք վավերական են՝ մինչեւ դրանց գործողության ժամկետի ավարտը:

Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ կամ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի տրամադրում կամ ընդունում չի թույլատրվում.

3.3. Մինչեւ 2013 թվականի օգոստոսի 15-ը թույլատրվում է արտադրանքի արտադրությունը եւ այն շրջանառության մեջ դնելը՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ կամ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով ավելի վաղ սահմանված պարտադիր պահանջներին համապատասխան՝ նշված պարտադիր պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) մասին այն փաստաթղթերի առկայության դեպքում, որոնք տրամադրվել կամ ընդունվել են՝ մինչեւ տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը:

Նշված արտադրանքը մակնշվում է համապատասխանության ազգային նշանով (շուկայում շրջանառության նշանով)՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Այդ արտադրանքի մակնշումը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով չի թույլատրվում:

3.4. Սույն Որոշման 3.2 ենթակետում նշված համապատասխանության գնահատման (հավաստման) մասին փաստաթղթերի գործողության ժամկետում շրջանառության մեջ դրված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված պիտանիության ժամկետի (ծառայության ժամկետի) ընթացքում:

4. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ նախապատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծ եւ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ եռամսյա ժամկետում սահմանված կարգով այն ներկայացնել Հանձնաժողովի հաստատմանը:

5. Ռուսական կողմին՝ Կողմերի մասնակցությամբ, ստանդարտների կիրառման արդյունքների դիտանցման հիման վրա, ապահովել սույն Որոշման 2-րդ կետում նշված ստանդարտների ցանկերի արդիականացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը եւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած տարեկան առնվազն մեկ անգամ՝ սահմանված կարգով դրանց հաստատման համար Հանձնաժողովի քարտուղարություն ներկայացնելը:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	Ղազախստանի Հանրապետությունից	Ռուսաստանի Դաշնությունից
Ս. Ռումաս	Ու. Շուկեեւ	Ի. Շուվալով